

Հարգելի՛ ընթերցող,

**Արցախի Երիտասարդ Գիտնականների և Մասնագետների Միավորման (ԱԵԳՄՄ)** նախագիծ հանդիսացող **Արցախի Էլեկտրոնային Գրադարանի** կայքում տեղադրվում են Արցախի վերաբերյալ գիտավերլուծական, ճանաչողական և գեղարվեստական նյութեր՝ հայերեն, ռուսերեն և անգլերեն լեզուներով: Նյութերը կարող եք ներբեռնել ԱՆՎՃԱՐ:

Էլեկտրոնային գրադարանի նյութերն այլ կայքերում տեղադրելու համար պետք է ստանալ ԱԵԳՄՄ-ի թույլտվությունը և նշել անհրաժեշտ տվյալները:

Շնորհակալություն ենք հայտնում բոլոր հեղինակներին և հրատարակիչներին՝ աշխատանքների էլեկտրոնային տարբերակները կայքում տեղադրելու թույլտվության համար:



Уважаемый читатель!

На сайте **Электронной библиотеки Арцаха**, являющейся проектом **Объединения Молодых Учёных и Специалистов Арцаха (ОМУСА)**, размещаются научно-аналитические, познавательные и художественные материалы об Арцахе на армянском, русском и английском языках. Материалы можете скачать БЕСПЛАТНО.

Для того, чтобы размещать любой материал Электронной библиотеки на другом сайте, вы должны сначала получить разрешение ОМУСА и указать необходимые данные.

Мы благодарим всех авторов и издателей за разрешение размещать электронные версии своих работ на этом сайте.

Dear reader,

**The Union of Young Scientists and Specialists of Artsakh (UYSSA)** presents its project - **Artsakh E-Library** website, where you can find and download for FREE scientific and research, cognitive and literary materials on Artsakh in Armenian, Russian and English languages.

If re-using any material from our site you have first to get the UYSSA approval and specify the required data.

We thank all the authors and publishers for giving permission to place the electronic versions of their works on this website.

### Մեր տվյալները – Наши контакты - Our contacts

Site: <http://artsakhib.am/>

E-mail: [info@artsakhib.am](mailto:info@artsakhib.am)

Facebook: <https://www.facebook.com/www.artsakhib.am/>

ВКонтакте: <https://vk.com/artsakhiblibrary>

Twitter: <https://twitter.com/ArtsakhELibrary>

ՀԱՄԱԿԱՐԳՆԵՐ ԳԵՏԱԿԱՆ  
ՀԱՄԱԿԱՐԳՆԵՐ ԳՐԱԳԱՐԱՆ

ԳՅԴ ԵՍԿ 07թ

«Ազգ եւ ժառանգություն»  
Համահայկական  
երիտասարդական  
գիտաժողով



Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն  
Ստեփանակերտ  
սեպտեմբեր 26-30, 2006թ.

ՀՀ մշակույթի եւ երիտասարդության հարցերի նախարարություն  
ԼՂՀ կրթության, մշակույթի եւ սպորտի նախարարություն  
ՀՀ «Երիտասարդական միջոցառումների կազմակերպման  
կենտրոն» ՊՈԱԿ  
ԼՂՀ մշակույթի եւ երիտասարդության պալատ

«Ազգ եւ ժառանգություն»  
համահայկական  
երիտասարդական  
գիտաժողով

Սեպտեմբեր 26-30 2006 թ.  
Ստեփանակերտ

Գիտաժողովը նվիրվում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության  
հռչակման 15-ամյակին

Խմբագրական խորհուրդ

Ս. Խանյան -բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,  
գիտության վաստակավոր գործիչ

Վ. Բալայան- պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ

Ա. Մխիթարյան – հոգեբանական գիտությունների թեկնածու, պրոֆեսոր

Շ. Ասրյան- տնտեսագիտության ամբիոնի դասախոս

Լ. Բեգլարյան- տնտեսագիտության ամբիոնի դասախոս

Գրքում զետեղված են սեպտեմբերի 26-30-ը տեղի ունեցած  
Համահայկական երիտասարդական գիտաժողովի զեկուցումները

Լ ընծեռնել իր ժողովրդի հանդեպ դառնալ արդարության իրական կրաշխավոր պետություն:

Ղարաբաղի Հանրապետության ճանաչումն ամբողջովին ներդրավվում է ժամանակակից իրողությունների շրջանակում եւ կդառնա ուսարածաշրջանային կայունության ու անվտանգության կարեւոր գործոն: Չնայած վերջին զարգացումներին, հատկապես Ղարաբայան հարցով ամերիկացի համանախագահ Մեթյու Քրայդայի վերջին սենսացիոն հայտարարություններին հարցի կարգավորման ուղղությամբ, մենք կպահպանենք այն ինչն ձեռք ենք բերել արյամբ: Ընկալությունների սեղանին դրված ներկա առաջարկները անընդունելի են հակամարտող կողմերի համար, եւ ես գտնում եմ, որ մեր իշխանավորները չեն գնա այն փոխզիջմանը, որը կհակասի մեր ձեռք բերած իրավունքի պահպանմանը: Ներկա իրավիճակում հարցը վիակուղի է մտել եւ միջազգային ուժերի շտապողականությունը հարցը՝ այս տարի վերջնակետին հասցնելը, չի արդարանա, սա, իհարկե, նիսնգամայն տեսանելի է բոլորիս համար:

Հետեւապես մենք զարգացնենք մեր պետությունը եւ գործենք ժողովրդավար հիմունքներով, եւ պետք է ազատագրված տարածքները իրավաբանորեն ամրագրվեն մեր պետության կողմից: Պետք է առաջին հերթին հարգենք ինքներս մեզ եւ հետո ստիպենք, որ հարգեն մեզ:

Չպետք է արյունով ձեռք բերած հաղթանակին հաջորդի ստորությամբ ու քծնանքով վավերագրված «հաղթանակը», ինչպես Խելոս Լեոնիդ Ազգալոյանն էր ժամանակին նկատել:

- Ոչ մի թիզ ՀՈՂ ենթակա չէ վաճառքի...

*Վաչագան Սեդրակյան  
«Ազատ Հայք» ԲՀԿ*

### **Ղարաբայան հակամարտության նախապատմություն. Իրավիճակն ու հնարավոր զարգացումները**

«Ղարաբայան հակամարտություն» արտահայտությունը սահմանելու, առավել ևս հասկանալու համար բավական չէ ետ գնալ մինչև 1988 թվականը, երբ Արցախում սկսվեցին զանգվածային հանրահավաքներ ու ցույցեր, տեղի ունեցան, ինչպես հիմա ենք ասում տեղական ինքնակառավարման և մարզային մարմինների արտահերթ նիստեր, որտեղ որոշումներ ընդունվեցին մարզը Ադրբեջանական ԽՍՀ կազմից դուրս բերելու և այն Հայկական ԽՍՀ-ին միացնելու մասին:

Դրանից հետո տեղի ունեցած իրադարձություններին ծանոթ է ամբողջ աշխարհը, և միջազգային հանրությունը, խնդրի լուծմամբ շահագրգիռ գրեթե բոլոր երկրները դարաբաղյան հակամարտություն ասելով հասկանում են ԽՍ փլուզման շրջանում հայերի և ադրբեջանցիների միջև ծագած հակամարտությունը: Առաջ անցնելով ասենք, որ քանի դեռ եվրոպական և այլ երկրներ կառչած կմնան այդ մտայնությանը, նրանց կողմից նույնիսկ անկեղծորեն ձեռնարկված ոչ մի խաղաղարար նախաձեռնություն ու գործողություն հաջողություն չի կարող ունենալ:

Ադրբեջանը և նրան առավել կամ պակաս չափով սատարող պետությունները, թե ներքուստ, թե արտաքուստ Հայաստանի Հանրապետության, Արցախի նկատմամբ համակրանք արտահայտող բոլոր երկրներն էլ ի վերջո մնում են այն կանխակալ համոզմունքին, որ Ադրբեջանի մաս կազմող մի տարածքի (այսինքն Արցախի) հանրության մի մասի (թեև մեծ, բայց ևայնպես մի մասի հայերի) անջատողական գործողություններով խախտվել է Ադրբեջանի տարածքային ամբողջականությունը և այլն, իհարկե, պետք է վերականգնվի: Եվ եթե չլիներ միջազգային իրավունքի մի այլ հիմնարար սկզբունք՝ ազգերի ինքնորոշման իրավունքը, չէր կարելի բացառել Հայաստանի նկատմամբ որպես ազգեստրի տնտեսական պատժամիջոցներ կիրառելու հավանականությունը:

Ինչո՞ւ այսքան տարի անցնելուց հետո էլ հարցը շարունակվում է դրված մնալ այս հարթության վրա: Թվարկենք մի քանի հնարավոր պատասխաններ:

1. Աշխարհի երկրները չգիտեն ոչ Հայաստանի, ոչ էլ Ադրբեջանի ու Արցախի պատմությունը, նրանց համար ելակետը ԽՍ թողած անվանումներն են ու սահմանները:
2. Աշխարհի երկրները ամեն ինչ լավ գիտեն, սակայն նրանց կենսական շահերը այլ բան են պահանջում:
3. Աշխարհի երկրները համոզված են, որ Արցախը Հայաստանի հետ վերամիավորվելուց հետո Կովկասյան տարածաշրջանում էլ ավելի կսրվեն ազգամիջյան հարաբերությունները, կառաջանան լարվածության մոր օջախներ:
4. Աշխարհի երկրները հարցը կլուծեն այն երկրի օգտին, որից ավելի մեծ շահ կստանան:
5. Աշխարհի երկրները իրենք էլ չեն կողմնորոշվում իրենց գործողություններում, և, բացի այդ, առկա են լարվածության առավել

վտանգավոր օջախներ, այնպես որ այսօրվա ստատուս քվոն նախընտրելի է:

6. Աշխարհի երկրներից ոչինչ էլ կախված չէ, նրանք ընդամենը կստարուն են աշխարհի տեղերի ու գերիզոր անձանց պատվերը:

7. Գլխավորը ԱՄՆ-ը և Ռուսաստանն են: Նրանց պայքարը տեղափոխվել է աշխարհի այլ մասեր և այս տարածաշրջանում դեռ նախապատրաստվում են վճռական մարտի:

8. Խնդիրը չեն ուզում լուծել Հայաստանի և Ադրբեջանի կողմնպացված իշխանությունները, որովհետև լարվածության պահպանումն է իշխանության դեկին մնալու գլխավոր երաշխիքը:

9. Ադրբեջանն ու Հայաստանը հետամնաց երկրներ են, և նրանց քաղաքակրթելով, տնտեսական օգնություններ ցույց տալով միայն հնարավոր կլինի հասկացնել, որ հաշտվելն ու խաղաղ ապրելը այլընտրանք չունեն...

Անշուշտ, կարելի է շարունակել պատասխանների այս շարքը, բայց եղածն էլ բավական է նկատելու, որ չի ասվում ամենագլխավորը: Արժե հիշել մեծ բանաստեղծին (Վ. Տերյան).

**«Մեզ չի հասկանա օտարերկրացին,**

**Մեզ չի հասկանա սառն օտարուհին»:**

Բանակցային գործընթացի զաղտմիությունը, քննարկվող հարցի մասնամասնեղին բացարձակապես անտեղյակ լինելը թույլ չեն տալիս խոսել կարգավորման հեռանկարների մասին: Մեր ունեցած սրտկերացումները չեն անցնում բանակցության մասնակիցների ընդհանուր բնույթի, երբեմն էլ վերացական, ոչինչ չգասող, և հենց այդքանով էլ դիվանագիտական հորջորջվող, հայտարարությունների լրվանդակության սահմանից: Ստեպ-ստեպ մամուլի էջերում ի հայտ եկող հրապարակումները արդեն արված որոշակի քայլեր, ասված խոսքեր, նախնական պայմանավորվածություններ և այլն, կարող են առիթ տալ կռահումների ու դատողությունների, բայց ոչ հզորակացությունների: Ուստի մեր ասելիքն ավելի շատ հիշեցման բնույթ ունի, քան խորհուրդների ու վերլուծության: Հիշեցումներ, որոնք չհատվող ուղիղների նման չեն առնչվում այն խնդիրներին, որոնք, ամեն ինչից անկախ, պետք է լուծեն իշխանությունները շարունակել դիվանագիտական-լրբիստական գործունեությունը, ամրապնդել մեր տնտեսությունն ու բանակը Ադրբեջանին հակազդելու մեր գլխավոր կրաշխիքը և այլն:

Եվ այսպես, հիշեցում առաջին:

Ղարաբաղյան հակամարտության անունն է Ղարաբաղյան: Հակամարտությունը օտարների հայերի նկատմամբ կիրառված դարավոր քաղաքականության օրինակալի հետևանքն է: Հակամարտությունը հողային պահանջ չէ, ազգամիջյան թշնամանք չէ, կլանների կամ իշխանությունների պայքար չէ: Հակամարտությունը իր գոյատևության իրավունքի դեմ ոտնձգություններ կատարելը և դրանք այլևս չհանդուրժելու հայ ազգի վճիռն է:

Հագարամյակներ շարունակ Արցախը բնակեցված է եղել հայերով, ընդհուպ մեր օրերը, եղել է հայկական քաղաքակրթության և մշակույթի օջախներից մեկը, հայոց արևելյան սահմանների գլխավոր գորական ուժը: Իրենց գերիշխանությունը ամրապնդելու կամ տևականացնելու նպատակով մեծ տերությունները հաճախ այն մասնատելով կամ ամբողջությամբ մտցրել են այլ պետական ու վարչական միավորների մեջ (օրինակ Աղվանքի, Ելիզավետպոլի մահանգի, Ադրբեջանական խՍՀ-ի և այլն): Վերջին դեպքում մասնատումն այնքան ակնհայտ էր, որ ստիպված եղան Ղարաբաղին հավելել չեռնային բառը, մի հասկացություն (վարչական), որը չի եղել պարսկական գերիշխանության հարյուրավոր տարիների ընթացքում, ընդհուպ մինչև Ռուսաստանին կցվելը:

Ռուսական նահանգների սահմաններն էլ նվաճած երկրներում որոշվել են այլ չափանիշներով, օրինակ Թիֆլիսի նահանգի մեջ մտել են և վրացական, և հայկական տարածքներ, Բաքվի, Ելիզավետպոլի նահանգների մեջ և հայկական, և «մուսուլմանական» գավառներ: Թերևս դա է միակ պատճառը, որ մեր հարևանները Թիֆլիս կամ Ելիզավետպոլ նահանգի ամբողջ տարածքը համարում են պատմական վրացական, ադրբեջանական հողեր... Ի՞նչ կարող ես ասել, այս է մեր մերձավոր հարևանների տրամաբանական կարողությունների աստիճանը:

Միջանկյալ ծեուվ ասենք, արդյոք նույն քաղաքականությունը չի՞ տարվում այսօր, երբ մեծ տերությունները լսել անգամ չեն ուզում Արցախը Հայաստանին միացնելու շշուկներն անգամ, իսկ ահա որպես անկախ պետություն... Ստա՞ծել կարելի է, ծանրութեթև անել...

Ղարաբաղը որպես անկախ պետություն, ոչ Հայաստանի Հանրապետության մարզ, սա առավելագույն զիջումն է, որը կարող է թույլ տալ հայ ժողովուրդը, և մեթ երկու հանրապետությունների

դեկավարությունը պետք է քաջ գիտակցի, ավելի լայն լիազորություններ իրենց չունեն:

Հիշեցում երկրորդ, պատմություն և ներկա իրողություններ: Ինձախ կարելի է չսել, որ այսօրվա աշխարհը կարևորությունը տալիս է ոչ թե պատմությանը (դրանից ածանցվող հասկացություններով հանդերձ պատմական արդարություն, պատմական ճշմարտություն, պատմական հիշողություն, պատմական իրավունք և այլն), այլ ներկային և ապագային, առավելաբար՝ ներկա իրողություններին: Եվ բավական տարածված է այն տեսակետը, թե մենք ներկա իրողությունը գգալու կարողությունից եթե զուրկ չենք, ապա խիստ տկար ենք: Մեր դադափառախոսության, քարոզչության, դիվանագիտության մեջ պետք է ամրագրվի այն սկզբունքը, որ երկուսն էլ մեզ համար հավասարապես և ընդունելի են, և հարազատ, և որ մեկը մյուսին չեն խանգարում:

Կտրվել անցյալից և մոռանալ պատմությունը անմարդկային է, անաստվածության դրսևորումներից մեկը: Այսօր ո՞ր ժողովուրդը, ո՞ր պետության իշխանությունն է ընտրել կարգախոս կորչեն իշողությունը, պատմությունը, անցյալը, մարդկայնությունը, կորչի Առաված... Ընդհակառակ, Աստծո, մարդկայնության անունից ինչքան յարիքներ են գործվում ու դավեր նյութվում: Ուրե՛մն, մենք չենք կրածարվում պատմությունից: Հայ ժողովուրդն է իրական տերը այն տարածքի, որ հինուց անտի կոչվում է հայկական չեռնաշխարհի, որ հայաստան են ճանաչել ու կոչել անհետացած, քայք գրավոր վկայություններ թողած մեր դրկից ազգերը, մեր օրերում ապրող և դարձյալ գրավոր վկայություններ ունեցող ազգերը, պետությունները նկերջին գրավոր վկայությունը դեռ չի բոլորել իր ծննդյան մեկ դարը: Սերի պայմանագիր, 1920 թ.):

Իսկ իրականության զգացողությամբ մենք ավելի զորավոր ենք, լուսն այդ մասին ճամարտակող «այս աշխարհի հզորները»: Այլապես չիլնք ասի.

-Թուրքիայի հետ հարաբերություննե՞ր... Այո, ողջունում ենք, լուսն առանց նախապայմանների: Այլապես առանց երկար-բարակ մտածելու ժամանակին կմտնեինք Եսփիջևան, այլապես այսօր սյուստերազմ կհայտարարեինք Վրաստանին: Բայց ի՞նչ եք կարծում, եթե Վրաստանը շարունակի «սեղմել» ջավախահայությանը (հիմա վիրահայությանը), շարունակի ոչնչացնել, պղծել, լավագույն դեպքում ռեիականացնել մեր ստեղծած եւ այնտեղ մնացած նյութական ու

հոգևոր արժեքները, տարբեր առիթներով արված հայտարարություններում անհարկի հիշատակի հայ, Հայաստան բառերը և վիրավորի մեր արժանապատվությունը, շարունակի մնալ Հայաստանի շրջափակման պատճառներից մեկը և այլն, Հայաստանը իրավունք չի՝ ունենա պաշտպանել իր կենսական շահերը և իրեն միացնել Վրաստանի հարավում գտնվող հայկական ու հայաբնակ շրջանները: Իսկ դրանից հետո ո՞վ չի ծիծաղի մեզ վրա, եթե Վրաստանի հետ սկսենք բանակցային մի գործընթաց ու քննարկենք ջանախառնությանը լայն ինքնավարություն տալու, անվտանգության գոտի ստեղծելու, խաղաղարար ուժեր տեղակայելու և այլ խնդիրներ, այն ամենը, ինչն այսօր կազմում են Հայաստանի և Ադրբեջանի բանակցային գործընթացի բաղադրիչները...

Մենք չէ, որ պատերազմ ենք հայտարարել Ադրբեջանին: Խլածոք (կամ ավելի ճիշտ իրեն նվիրվածոք) քիչ համարելով նա ցանկացավ ավելին ունենալ՝ անտեղյակ լինելով պատմության մեծերից մեկի խորհրդին. «Վտանգավոր է չափից ավելին ցանկանալը»: Մենք ընդամենը վերադարձրել ենք մի մասը այն ամենից, ինչ մեզանից վերցրել են:

Այնպես որ, պատմությունը ներկայի հիմքն է, քանզվեց այդ հիմքը, չի լինի ներկա, բնականաբար և ապագա: Ուրեմն կեղծ են հանուն ապագայի անցյալից հրաժարվելու կոչերը: Այդ կոչերը այլ նպատակ են հետապնդում, որոնց մասին խոսելը դուրս է այսօրվա նյութից:

Հիշեցում երրորդ. դքսի համար եւ ներսի համար: Անկեղծ ասած չգիտեմ, ով է առաջինը դիվանագիտության մեջ ներմուծել նույն երևույթը օտարին մի կերպ, սեփական ժողովրդին այլ կերպ ներկայացնելու մարտավարությունը: Համենայն դեպս, իմ իմացած լավագույն օրինակը մեզ ավանդել է Խորհրդային Միությունը, եւ այսօր մեր դիվանագետները, պետական-քաղաքական գործիչները հետևելով այդ մարտավարությանը, դրսում այլ կերպ են, ներկայացնում իրենց, Հայաստանը, Հայաստանի խնդիրները, այստեղ այլ: Ջարձմանալին, սակայն, այն է, որ նրանք հնարավոր են համարում «չբռնվելը»: Դե, իսկ եթե բռնված չէ, գող չէ. և հանգիստ կարելի է փակել աչքերն ու հավատալ, որ իրեն ոչ ոք չի տեսնում: Սի բան էլ կարող է լինել. ամեննախ չեն վախենում բռնվելուց: Սա արդեն ուրիշ խնդիր է, և այդ մասին պետք է մտածել այլ չափաբաժնով, այլ չափանիշներով:

Հիշեցում չորրորդ. նպատակ և միջոց: Խորհրդային ժամանակներում կրթություն և դաստիարակություն ստացած մարդիկ հավանաբար չեն մոռացել կոմունիստական գաղափարաբանության այն առանցքային դրույթներից մեկը, ըստ որի իշխող դասակարգերը, յոխողները, պաշտոնյաները, հոգևորականները և այլ կառավարողները միշտ աշխատել են ժողովրդին պահել խավարի ու տգիտության մեջ: Ուր օրերում խավար ու տգիտություն ասելով պետք է հասկանալ ոչ թե գիտելիքների պակասը, այլ աշխարհում ու առանձին երկրներում ընթացող զարգացումներին անտեղյակ լինելը, կուլիսների ետևում ընթացող բանակցությունների, գաղտնի համաձայնությունների նյութից գաղափար չունենալը:

Սիա այդ «ժամանակակից» տգիտությունը չէ՞ պատճառը, որ այսօր միմյանց հետ են շփոթվում կամ ուղղակի նույնացվում են նպատակն ու միջոցը, պատճառն ու հետևանքը: Օրինակ, նպատակ է հռչակվում անկախությունը, մինչդեռ այն միջոց է որոշակի նպատակների հասնելու համար: Եպատակ է հռչակվում փողը, իշխանությունը, խաղաղությունը... և մարդը ինքն իրեն չի հարցնում. իսկ դա՞՞ ինչի համար է... Եթե անկախությամբ մենք այսօր չենք լուծում ոչ մի հիմնահարց, ուրեմն կամ դա անկախություն չէ, կամ այդպիսի անկախություն պետք չէ: Եթե խաղաղությունը ոչնչացնում է մարդու տեսակներից մեկը, օրինակ հայ տեսակը, ո՞ւմ է ձեռնտու այդ խաղաղությունը, հայի՞ն: Ինչ է, հայը տառապում է ինքնառչնացման մոլուցքով: Օրինակներ, անշուշտ, շատ կարելի է բերել: Խնդիրն այն է, որ պետական այրերը, առաջնորդի դեր ստանձնած անձերն ու խմբերը նախ իրենք իրենց համար ճշտեն նպատակների գերակայություններն ու դրանց հասնելու միջոցները և ապա հասարակությանը, ժողովրդին կողմնորոշեն, մեր կարծիքով, ոչ այնքան բարդ այս խնդրում:

*Վաչիկ Դանիելյան*  
*«Հայրենյաց պաշտպան» ԵԴԿ*

**Ղարաբաղյան հակամարտության նախապատմությունը**

Ամեն մի երկիր, ամեն ազգ իր ավանդական պատվարն ունի: Երբ ժողովրդի պատմությունը հաջող ընթացք է ունենում, այն դառնում է նշակութային եւ քաղաքական կյանքի կենտրոն: Իսկ երբ ճակատագիրը հստակում է ազգին, դառնում է ազգային կյանքի կենտրոն, հույզերի կղզի, վերածնության երաշխիք:



Ֆորմատ 84x60/8, ծավալը՝ 10.5 տպագրական մամուլ,  
տպաքանակը՝ 300, թուղթ՝ օֆսեթ:  
Տպագրությունը՝ «ՊՈԼԻԳՐԱՖ» ՓԲԸ  
*Ստեփանակերտ, Վ.Մամիկոնյանի փող., 21,*  
*հեռ 4-89-96, 4-89-97, 4-89-98,*

